ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-691634 «09» 08 2019թ.

«ԿԱՐՊ-ԳԱԶ-ՌԱԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ
ՀՀ Կոտայքի մարզ ք.
Եղվարդ, Պ. Սևակի 3/7

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Բեգլարյան

Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.05.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Հաշվի առնելով Ձեր 24.07.2019 թվականի գրությունը՝ համաձայն որի Ընկերությունը փաստացի հրաժարվել է վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց և խնդրել է պայմանագիրը լուծել, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի, հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատ՝ Գ. Հուրոյան
Հեռ. 011514 194